

# **ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ**

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2017թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա վերաբերյալ

**ԵՐԵՎԱՆ**

## **Բովանդակություն**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ	
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<b>Ծնթ.</b>	<b>31.12.2017թ.</b>	<b>31.12.2016թ.</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>		հազար դրամ	հազար դրամ
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4	26,991	39,749
Ոչ նյութական ակտիվներ	5	1,334	2,268
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		33,397	36,780
		<b>61,722</b>	<b>78,797</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ		183	425
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	305,169	226,166
Հետաձգված ծախսեր		10,947	8,693
Տրված փոխառություններ		109,590	94,506
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	35,184	23,723
		<b>461,073</b>	<b>353,513</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>522,795</b>	<b>432,310</b>
<b>ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Կանոնադրական կապիտալ		100	100
Կուտակված շահույթ		6,909	28,878
		<b>7,009</b>	<b>28,978</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	8	80,642	85,606
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	9	-	6,623
Հետաձգված հարկային պարտավորություններ		8,738	6,262
		<b>89,380</b>	<b>98,491</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	8	132,923	92,360
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	9	5,982	4,837
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	287,501	207,644
		<b>426,406</b>	<b>304,841</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>522,795</b>	<b>432,310</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2018թ. մարտի 27-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գագիկ Գյուլբուրադյան  
Տնօրեն



Արևիկոս Մարտիրոսյան  
Գլխավոր հաշվապահ

**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա վերաբերյալ

	<b>Ծնթ.</b>	<b>2017</b>	<b>2016</b>
		հազար դրամ	հազար դրամ
Հասույթ		1,145,391	1,185,517
Վաճառքի ինքնարժեք		(965,083)	(973,435)
<b>Համախառն շահույթ</b>		<b>180,308</b>	<b>212,082</b>
Վարչական ծախսեր		(170,618)	(167,332)
Այլ եկամուտ	11	26,856	19,323
Այլ ծախսեր	12	(9,835)	(12,814)
<b>Գործառնական շահույթ</b>		<b>26,711</b>	<b>51,259</b>
Ֆինանսական ծախսեր		(17,257)	(11,628)
Այլ օգուտ	13	7,245	2,143
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>16,699</b>	<b>41,774</b>
Շահութահարկի գծով ծախս	14	(9,790)	(5,396)
<b>Տարվա շահույթ</b>		<b>6,909</b>	<b>36,378</b>
Այլ համապարփակ եկամուտ			-
<b>Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>6,909</b>	<b>36,378</b>

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա վերաբերյալ

հազար դրամ

	<b>Կանոնա- դրական կապիտալ</b>	<b>Կուտակված շահույթ</b>	<b>Ընդամենը կապիտալ</b>
<b>Մնացորդն առ 1 հունվարի 2016թ.</b>	<u>100</u>	<u>17,616</u>	<u>17,716</u>
Տարվա շահույթ	-	36,378	36,378
Շահաբաժինների բաշխում	-	(17,616)	(17,616)
Միջանկյալ շահաբաժինների բաշխում	-	(7,500)	(7,500)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	<u>100</u>	<u>28,878</u>	<u>28,978</u>
Տարվա շահույթ	-	6,909	6,909
Շահաբաժինների բաշխում	-	(28,878)	(28,878)
Միջանկյալ շահաբաժինների բաշխում	-	-	-
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	<u>100</u>	<u>6,909</u>	<u>7,009</u>

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա վերաբերյալ

	2017	2016
	հազար դրամ	հազար դրամ
<b>Գործառնական գործունեությունից</b>		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,226,760	1,289,856
Աշխատակիցների փոխհատուցումների գծով	(365,112)	(390,398)
Վճարումներ հարկերի գծով	(184,993)	(220,556)
Վճարում շահութահարկի գծով	(1,660)	(8,100)
Վճարում վարձավճարների գծով	(50,065)	(54,730)
Վճարումներ ծառայությունների գծով	(581,356)	(638,547)
Այլ ելքեր	(13,155)	(10,179)
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսքեր</b>	<b>30,419</b>	<b>(32,654)</b>
<b>Ներդրումային գործունեությունից</b>		
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	859	3,598
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով ելքեր	(3,284)	(13,760)
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսքեր</b>	<b>(2,425)</b>	<b>(10,162)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից</b>		
Փոխառությունների, վարկերի ստացումից մուտքեր	96,839	246,149
Ստացված վարկերի, փոխառությունների մարում	(71,752)	(147,029)
Տոկոսների վճարում	(12,073)	(7,242)
Շահաբաժինների վճարում	(28,878)	(39,070)
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսքեր</b>	<b>(15,864)</b>	<b>52,808</b>
<b>Ընդամենը դրամական միջոցների զույգ աճ</b>	<b>12,130</b>	<b>9,992</b>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(669)	(1,124)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	23,723	14,855
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ</b>	<b>35,184</b>	<b>23,723</b>

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա վերաբերյալ

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1 Կազմակերպության համառոտ բնութագիրը

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) հիմնադրվել է 2010թ.-ի նոյեմբերի 3-ին՝ հանդիսանալով "Գրանթ Թորնթոն Ամիս" ՍՊԸ-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 1997թ.-ի հունիսի 20-ին: Ընկերության կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2010թ.-ի նոյեմբերի 19-ին, գրանցման համարը՝ 264.120.09235, վկայական 03 Ա 090206: Ընկերության իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ք. Երևան 0012, Վաղարշ Վաղարշյան 8/1: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00040569:

2017թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 104 (2016թ.՝ 103):

### 1.2. Դուստր կազմակերպություններ

31.12.2017թ. դրությամբ Ընկերությունը չունի դուստր կազմակերպություններ:

## 2. Պատրաստման հիմքերը

### 2.1. Համապարասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

### 2.2. Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

### 2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով:

### 2.4. Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ

ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

## **2.5. Նոր և վերանայված ստանդարտների ընդունում**

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2017թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Չնայած այս նոր ստանդարտները և փոփոխությունները առաջին անգամ կիրառելի են 2017թ. ընթացքում, դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

## **Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

ՀՀՄՄ 12 (Փոփոխություններ) «Շահութահարկեր»

ՀՀՄՄԻ-ը թողարկել է «Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում» պարզաբանումը, որը ՀՀՄՄ 12-ում՝ «Շահութահարկեր», կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքերում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

- այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,
- ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,
- հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետընթաց: Այս փոփոխություններն էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

## **Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի



մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

#### ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՀՀՄՍԻ-ը թողարկել է ՖՀՄՍ 9-ը «Ֆինանսական գործիքներ»՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՍ 39-ին «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՍ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը նաև ապահովում է նոր ուղեցույց՝ հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ: Ընկերության ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

#### ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հասույթի ճանաչման նոր պահանջներ է ներկայացնում՝ փոխարինելով ՀՀՄՍ 18-ը «Հասույթ», ՀՀՄՍ 11-ը «Կառուցման պայմանագրեր» և հասույթի հետ կապված որոշ այլ մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հասույթի ճանաչման մոդել՝ հիմնված վերահսկողության վրա և լրացուցիչ ուղեցույց է տրամադրում գործող ՖՀՄՍ-ներում մանրամասնորեն չներկայացված տարբեր ոլորտների վերաբերյալ, ներառյալ՝ ինչպես հաշվառել բազմակի պարտավորությունների կատարման, փոփոխուն գնագոյացմամբ, հաճախորդներին փոխհատուցման իրավունքների, մատակարարների՝ հետզնման տարբերակների պայմաններ և այլ բարդություններ պարունակող պայմանագրերը: ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ում ներկայացված են վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ դրանց այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոփոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;

- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», նույնպես կիրառվի: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ»

ՖՀՄՄԿ 22-ը պարզաբանում է, թե ինչ փոխարժեքով պետք է իրականացվի փոխարկումը, երբ վճարումները կատարվել կամ ստացվել են նախքան համապատասխան ակտիվը կամ եկամուտը ստանալը, կամ ծախսը կատարելը:

ՖՀՄՄԿ 22-ն անդրադառնում է այս հարցին՝ պարզաբանելով, որ համապատասխան ակտիվի, ծախսի կամ եկամտի (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ Ընկերությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարի վճարումից կամ ստացումից առաջացած ոչ դրամային ակտիվը կամ պարտավորությունը:

Եթե կանխավճարները վճարվել կամ ստացվել են բազմակի անգամ, Ընկերությունը պետք է գործարքի ամսաթիվ որոշի կանխավճարի յուրաքանչյուր վճարման կամ ստացման համար:

ՖՀՄՄԿ 22-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը:

#### ՀՀՄՍ 40 (Փոփոխություններ) «Ներդրումային գույք»՝ *Ներդրումային գույքի վերադասակարգումներ*

Փոփոխությունները հստակեցնում են, որ ներդրումային գույք կամ ներդրումային գույքից վերադասակարգումները կարող են կատարվել, միայն եթե այդ գույքի օգտագործման փոփոխություն է տեղի ունեցել, որը հիմնավորված է ապացույցներով: Օգտագործման փոփոխություն տեղի է ունենում, երբ գույքը բավարարում է կամ դադարում է բավարարել ներդրումային գույքի սահմանմանը: Միայն մտադրության փոփոխությունը բավարար չէ վերադասակարգումը հիմնավորելու համար:

ՀՀՄՍ 40-ի փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը:

#### ՖՀՄՄԿ 23 «Ճահողափարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն»

ՖՀՄՄԿ 23-ը տրամադրում է ուղեցույց այն բանի վերաբերյալ, թե ինչպես արտացոլել ՀՀՄՍ 12-ի համաձայն հարկերի հաշվառման մեջ անորոշությունների ազդեցությունը, մասնավորապես. (ա) արդյոք անորոշ հարկային մոտեցումները պետք է դիտարկվեն առանձին, (բ) ենթադրությունները հարկային մարմինների ստուգումների վերաբերյալ, (գ) հարկվող շահույթի հարկային վնասի, հարկման բազանների, չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային կրեդիտների, ինչպես նաև հարկի դրույքաչափերի որոշում, և (դ) փաստերի և հանգամանքների փոփոխությունների ազդեցությունը:

ՖՀՄՄԿ 23-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը:

#### **Տարեկան բարեփոխումներ՝ 2014-2016թթ.**

2014-2016թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխությունները ամփոփված են ստորև.

ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»

ՖՀՄՍ-ները առաջին անգամ կիրառողների համար առկա կարճաժամկետ ազատումները այլևս

չեն գործում:

ՖՀՄՍ 1-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

### **3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ**

#### **3.1 Համապատասխանության մասին հայտարարություն**

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

#### **3.2 Անընդհատության սկզբունք**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

#### **3.3 Ճանաչման հիմքեր**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

#### **3.4 Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

#### **3.5. Գնահատումների և դափողությունների կիրառում**

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի

գումարների վրա: Չնայած այս գնահատումների հիմքում ընկած են ընթացիկ իրադարձությունների և գործողությունների վերաբերյալ տնօրինության լավագույն պատկերացումները, այնուամենայնիվ, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

### **3.6. Գործարքներ արտարժույթով**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 484.10 << դրամ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.94 << դրամ), 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 Եվրոն կազմում է 580.10 << դրամ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 Եվրոն կազմում է 512.20 << դրամ): Իրական արժեքով հաշվառվող և Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում:

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են (այլ արժույթից)՝ դրամի հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ << ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են (այլ արժույթի)՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին հաշվարկային փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

### **3.7. Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	- 1-3 տարի
Արտադրատնտեսական գույք	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Այլ հիմնական միջոցների դասեր	- 5 տարի

### **3.8. Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության

գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի ոչ նյութական ակտիվների դասի համար:

### **3.9. Վարձակալված ակտիվներ**

Համաձայն ՀՀՄՍ 17. "Վարձակալություն"-ի վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի փոքր է: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարներով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

### **3.10. Պաշարներ**

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով [առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) կամ միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### **3.11. Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական

պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:  
Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

### *Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

փոխառություններ և դեբիտորական պարտքեր,  
ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,  
վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,  
մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

#### **I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր**

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

#### **II. Մնացորդներ դրամարկղում և բանկերում**

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների "վարկեր և դեբիտորական պարտքեր" կատեգորիայում:

### *Ֆինանսական պարտավորություններ*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

#### **III. Վարկեր և փոխառություններ**

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

#### **IV. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

### **3.12. Սեփական կապիտալ**

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### **3.13. Շահութահարկ**

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

### **3.14. Հասույթի ճանաչում**

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

### *Ծառայությունների մատուցում*

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

### *Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ*

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

### *Վարձակալական եկամուտ*

Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում:



#### 4. Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրա- տնտեսա- կան գույք	Հաշվողա- կան տեխնիկա	Այլ հիմնա- կան միջոցներ	Ընդա- մենը
<b><i>Սկզբնական արժեք</i></b>					
<b>Առ 1 հունվարի 2016թ.</b>	53,398	40,301	65,678	27,634	187,011
Ավելացումներ	2,273	5,702	7,695	1,056	16,726
Նվազեցումներ	(9,734)	(8,843)	(30,307)	(2,830)	(51,714)
<b>Առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	45,937	37,160	43,066	25,860	152,023
Ավելացումներ	500	450	3,259	-	4,209
Նվազեցումներ	-	-	(716)	-	(716)
<b>Առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	46,437	37,610	45,609	25,860	155,516
<b><i>Կուտակված մաշվածություն</i></b>					
<b>Առ 1 հունվարի 2016թ.</b>	50,466	34,938	44,843	16,296	146,543
Ավելացումներ	2,144	2,055	8,059	3,243	15,501
Նվազեցումներ	(9,290)	(8,842)	(28,808)	(2,830)	(49,770)
<b>Առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	43,320	28,151	24,094	16,709	112,274
Ավելացումներ	1,085	2,520	9,381	3,265	16,251
<b>Առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	44,405	30,671	33,475	19,974	128,525
<b><i>Հաշվեկշռային արժեք</i></b>					
<b>Առ 1 հունվարի 2016թ.</b>	2,932	5,363	20,835	11,338	40,468
<b>Առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	2,617	9,009	18,972	9,151	39,749
<b>Առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	2,032	6,939	12,134	5,886	26,991

## 5. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Համակարգ- չային ծրագրեր	Լիցենզիաներ և ապրանքանիշեր	Այլ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>				
<b>Առ 1 հունվարի 2016թ.</b>	3,307	3,061	1,704	8,072
Ավելացումներ	78	-	240	318
<b>Առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	3,385	3,061	1,944	8,390
Ավելացումներ	-	-	243	243
<b>Առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	3,385	3,061	2,187	8,633
<b>Կուտակված ամորտիզացիա</b>				
<b>Առ 1 հունվարի 2016թ.</b>	301	1,391	1,704	3,396
Ավելացումներ	441	1,820	465	2,726
Վերադասակարգում	1,660	(417)	(1,243)	0
<b>Առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	2,402	2,794	926	6,122
Ավելացումներ	361	184	632	1,177
<b>Առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	2,763	2,978	1,558	7,299
<b>Ընթացիկ արժեք</b>				
<b>Առ 1 հունվարի 2016թ.</b>	3,006	1,670	-	4,676
<b>Առ 31 դեկտեմբերի 2016թ.</b>	983	267	1,018	2,268
<b>Առ 31 դեկտեմբերի 2017թ.</b>	622	83	629	1,334

## 6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2017	<i>հազար դրամ</i> 31.12.2016
<b>Առևտրային պարտքեր</b>		
Առևտրային դեբիտորական պարտքեր ծառայությունների գծով	75,983	121,177
Այլ իրացումների գծով	159,319	36,304
	<u>235,302</u>	<u>157,481</u>
<b>Առևտրային կանխավճարներ</b>		
Ծառայություններ ձեռք բերելու համար	20,127	9,337
Երաշխիքային գումարի տրամադրում	9,000	9,000
	<u>29,127</u>	<u>18,337</u>
<b>Հարկերի գծով</b>		
Հետաձգված ԱԱՀ-ի գծով	-	5,064
Շահութահարկի գծով կանխավճար	32,446	32,353
Գույքահարկի գծով կանխավճար	115	115
Ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով կանխավճար	1,629	184
	<u>34,190</u>	<u>37,716</u>
Այլ	6,550	12,632
	<u>305,169</u>	<u>226,166</u>

## 7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2017	<i>հազար դրամ</i> 31.12.2016
Բանկային հաշիվներ	34,163	19,600
Դրամարկղ	1,021	4,123
	<u>35,184</u>	<u>23,723</u>

## 8. Բանկային վարկեր և փոխառություններ

	31.12.2017	<i>հազար դրամ</i> 31.12.2016
<b>Մնացորդը տարվա սկզբին</b>	177,966	69,961
Ստացվել է տարվա ընթացքում	96,839	246,149
Փոխարժեքի տարբերություն	40	847
Հաշվարկվել է տոկոս	16,087	9,926
Մարվել է տարվա ընթացքում	(77,367)	(148,917)
Մնացորդը տարվա վերջին	<u>213,565</u>	<u>177,966</u>
Ոչ ընթացիկ մաս	80,642	85,606
Ընթացիկ մաս	132,923	92,360
	<u>213,565</u>	<u>177,966</u>

## 9. Պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով

	31.12.2017	31.12.2016
Նվազագույն վարձավճար	11,460	16,297
Հաշվարկված տոկոս	1,177	1,701
Մարում	(6,655)	(6,538)
	<u>5,982</u>	<u>11,460</u>

## 10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	<i>հազար դրամ</i>	
	31.12.2017	31.12.2016
<b><i>Առևտրային պարտքեր</i></b>		
Ծառայությունների գծով	109,932	87,226
Կանխավճարների գծով	<u>149,449</u>	<u>109,818</u>
	<u>259,381</u>	<u>197,044</u>
<b><i>Հարկերի գծով</i></b>		
Եկամտային հարկի գծով	6,916	8,716
ԱԱՀ-ի գծով	<u>8,611</u>	<u>853</u>
	<u>15,527</u>	<u>9,569</u>
<b><i>Այլ կրեդիտորական պարտքեր</i></b>		
Աշխատակիցների փոխհատուցման գծով	12,353	342
Այլ	<u>240</u>	<u>689</u>
	<u>12,593</u>	<u>1,031</u>
	<u><u>287,501</u></u>	<u><u>207,644</u></u>

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է մինչև երկու ամիս: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունը ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

### 11. Գործառնական այլ եկամուտներ

	2017	հազար դրամ 2016
Վարձակալություն	14,240	14,240
Փոխհատուցվող գումարներ	8,060	3,885
Տոկոսներ	-	107
Այլ	4,556	1,091
	<u>26,856</u>	<u>19,323</u>

### 12. Գործառնական այլ ծախսեր

	2017	հազար դրամ 2016
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	2,000	2,298
Տույժեր, տուգանքներ	743	1,760
Տրամադրված օգնություններ	4,200	4,207
Անդամավճարներ	2,176	1,076
Այլ ծախսեր	716	3,473
	<u>9,835</u>	<u>12,814</u>

### 13. Այլ օգուտ

	2017	հազար դրամ 2016
Հիմնական միջոցների օտարումից	716	2,998
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	6,529	(855)
	<u>7,245</u>	<u>2,143</u>

### 14. Շահութահարկ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.-20%):

	2017	հազար դրամ 2016
Ընթացիկ հարկի գծով ծախս	7,315	7,248
Հետաձգված հարկ	2,475	(1,852)
	<u>9,790</u>	<u>5,396</u>

## **15. Ֆինանսական գործիքներից բխող ռիսկեր**

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է ֆինանսական գործիքներից բխող տարբեր ռիսկերի՝ շուկայական (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույքային, այլ գնային ռիսկերը), իրացվելիության և պարտքային: Ընկերությունը չի կիրառում ածանցյալ գործիքներ հեջավորելու նշված ռիսկերը:

### **15.1 Շուկայական ռիսկ**

#### **15.1.1 Արժույթային ռիսկ**

Արժույթային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Ընկերության արժույթային ռիսկը հիմնականում կապված է արտարժույթով արտահայտված տրված ու ստացված փոխառությունների, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի, և դրամական միջոցների հետ: 31.12.2017թ.-ի դրությամբ չկա էական տարբերություն արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների միջև:

#### **15.1.2 Տոկոսադրույքային ռիսկ**

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ստացված վարկերը հաշվառվում են ամորտացված արժեքով, իսկ կապակցված կողմերից ստացված կամ նրանց տրամադրված փոխառությունները հաշվառվում են անվանական արժեքով, քանի որ նրանք ըստ բնույթի ցպահանջ փոխառություններ են:

#### **15.1.3 Այլ գնային ռիսկ**

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժույթային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

### **15.2 Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Ընկերության նկատմամբ իրենց

պարտավորությունները չկատարելու արդյունքում՝ Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկը առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային և այլ դեբիտորական պարտքերից:

120 օրից ավելի դեբիտորական պարտքերը ներառում են ավարտվածության աստիճանով որոշված հասույթները, որոնք կմարվեն աշխատանքների ավարտից հետո, հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում:

Ընկերությունը հաշվետու և նախորդ տարիներին չի ձևավորել առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության գծով պահուստ, քանի որ ըստ Ընկերության ղեկավարության գնահատման, տվյալ ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ էական չէ:

Անհուսալի դեբիտորական պարտքերը անմիջապես դուրս են գրվել: մասնավորապես հաշվետու տարում՝ 2,000 հազար դրամի չափով, իսկ 2016թ.-ին՝ 2,298 հազար դրամի չափով:

### **15.3 Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

## **16. Պայմանական դեպքեր**

### **16.1 Ապահովագրություն**

Ընկերությունը ունի մասնագիտական ապահովագրություն՝ երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ:

### **16.2 Դատական հայցեր**

2017թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից և Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չեն եղել: